

«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն

ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

05 սեպտեմբերի, 2012թ., Երևան

Մրցունակության համաշխարհային զեկույցի համաձայն Հայաստանն իր մրցունակությամբ 82-րդն է աշխարհի 144 երկրների մեջ

Համաշխարհային մրցունակության զեկույցը իր վերլուծություններն ամփոփում և համեմատվող երկրներին դասակարգում է Համաշխարհային մրցունակության ցուցչի (ՀԱՄ ցուցիչ) միջոցով: Վերջինս մշակվել է Համաշխարհային տնտեսական ֆորումի (ՀՏՖ) կողմից: ՀԱՄ ցուցիչը, հաշվարկվելով մրցունակության 12 հենասյուների հիման վրա, երկրների մրցունակության ամփոփ գնահատական է տալիս:

Վարկանիշերի հաշվարկման հիմքում ընկած են վիճակագրական տվյալներ և ընկերությունների ղեկավարների հարցման արդյունքները: Ընկերությունների ղեկավարների հարցումը տարեկան կտրվածքով իրականացվում է ՄՀԶ-ում ներառված երկրներում՝ ՀՏՖ-ի և Համաշխարհային մրցունակության ցանցի գործընկեր կազմակերպությունների կողմից:

«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնը՝ որպես ՀՏՖ Համաշխարհային մրցունակության և արտադրողականության կենտրոնի գործընկեր Հայաստանում, ներկայացնում է «Համաշխարհային մրցունակության զեկույց 2012/13»-ի հիմնական արդյունքները:

2012/13 զեկույցի արդյունքներով Շվեյցարիան շարունակում է պահպանել առաջատարի դիրքը: Մրցունակությամբ առաջին հնգյակում են նաև Սինգապուրը, Ֆինլանդիան, Շվեդիան և Նիդերլանդները:

ԱՊՀ տարածաշրջանի (ներառյալ Վրաստանը) երկրների խմբում նախորդ տարվա համեմատ հետընթաց է գրանցել Ռուսաստանը: Ղազախստանը, Հայաստանը, Ուկրաինան և Ադրբեջանը առավելագույնն են բարելավել իրենց դիրքերը:

ԱՊՀ երկրներ	ՀԱՄ 2012–13 Տեղ	ՀԱՄ 2011–12 Տեղ	Փոփոխություն
Ադրբեջան	46	55	+9
Ղազախստան	51	72	+21
Ռուսաստան	67	66	-1
Ուկրաինա	73	82	+9
Վրաստան	77	88	+11
Հայաստան	82	92	+10
Մոլդովա	87	93	+6
Տաջիկստան	100	105	+5
Ղրղզստան	127	126	-1

2012-2013թթ. Մրցունակության համաշխարհային զեկույցում (ՄՀԶ) Հայաստանը 144 երկրների մեջ գրավում է 82-րդ տեղը՝ դիրքը բարելավելով 10 տեղով: Դա պայմանավորված է մրցունակության ցուցչի հենասյուների մեծ մասի բարելավումներով: Էական առաջընթաց է

գրանցվել մակրոտնտեսական միջավայրի կայունության և ապրանքային շուկաների արդյունավետության հենասյուններով: Հայաստանի ցուցանիշերը բարելավվել են նաև հաստատությունների, բարձրագույն կրթության և վերապատրաստման, աշխատուժի և ֆինանսական շուկայի ոլորտներում:

Հայաստանը փոքր-ինչ հետընթաց է գրանցել ենթակառուցվածքների և տեխնոլոգիական պատրաստվածության առումով:

Հայաստանի մրցունակության հենասյունների փոփոխությունները

ՀԱՍ հենասյունները	ՀԱՍ 2012-13 տեղ 144 երկրների շարքում	ՀԱՍ 2011-12 տեղ 142 երկրների շարքում	Փոփոխություն
Ինստիտուտներ	71	83	+12
Ենթակառուցվածքներ	80	77	-3
Մակրոտնտեսական միջավայր/կայունություն	83	114	+31
Առողջապահություն և տարրական կրթություն	80	94	+14
Բարձրագույն կրթություն և վերապատրաստում	70	76	+6
Ապրանքների շուկայի արդյունավետություն	72	108	+36
Աշխատուժի շուկայի արդյունավետություն	30	34	+4
Ֆինանսական շուկայի զարգացվածություն	78	95	+17
Տեխնոլոգիական պատրաստվածություն	92	88	-4
Շուկայի չափ	115	115	0
Գործարարության կատարելագործվածություն	92	107	+15
Նորարարություն	105	112	+7

Հայաստանի հիմնական մրցակցային առավելություններն են աշխատանքի ընդունելու և աշխատանքից ազատելու գործելակերպը, նոր բիզնես սկսելու համար անհրաժեշտ գործընթացների պարզությունը, ինչպես նաև մալարիայի, հանցագործությունների և ահաբեկչության՝ բիզնեսի վրա ազդեցության ցածր մակարդակը, պետական քաղաքականության մշակման գործընթացի թափանցիկությունը, բիզնեսի գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված պետական ծառայությունները, ինչպես նաև վարձատրության և արտադրողականության կապի ցուցանիշները:

Ամենաբաց թերությունների շարքին են դասվել մրցակցային այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք են մրցակցության դաշտի հետ կապված խնդիրները, բիզնես կրթության որակը, մաքսային գործընթացների բեռը, շուկայի չափը, ինչպես նաև բուհ-արդյունաբերություն կապը, գիտահետազոտական հաստատությունների որակը և այլն:

Հայաստանի մրցունակության առավելություններն ու թերությունները

Ուշագրավ առավելություններ	Տեղ	Ուշագրավ թերություններ	Տեղ
Մալարիայի ազդեցությունը գործարարության վրա	1	Տեղական մրցակցության ուժգնությունը	130
Մալարիայի դեպքերի քանակը	1	Բիզնես կրթություն որակ	127
Նոր բիզնես սկսելու համար անհրաժեշտ գործընթացների քանակը	8	Մաքսային գործընթացների բեռը	127
Ահաբեկչության հետևանքով գործարարության ծախսերը	8	Արտասահմանյան շուկաների ինդեքս	123
Աշխատանքի ընդունելու և աշխատանքից ազատելու գործելակերպը	10	Բուհ-արդյունաբերություն համագործակցությունը հետազոտությունների և մշակումների բնագավառում	122
ՁԻԱՀ-ի տարածվածությունը	12	Հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետությունը	116
Հանցագործությունների և բռնության հետևանքով գործարարության ծախսերը	13	Ֆինանսավորում տեղական կապիտալի շուկայի միջոցով	115
Պետական քաղաքականության մշակման գործընթացի թափանցիկություն	16	Գիտահետազոտական հաստատությունների որակ	111
Աշխատավարձի սահմանման ձկունություն	21	Ընկերությունների՝ հետազոտությունների և մշակումների վրա կատարվող ծախսեր	111
Բիզնեսի գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված պետական ծառայություններ	31	Դատական համակարգի անկախություն	110
Վարձատրության և արտադրողականության կապը	31	Կորպորատիվ խորհուրդների արդյունավետություն	110

«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն

«Տնտեսություն և արժեքներ»-ը՝ «Ի-Վի Քոնսալթինգ» ընկերության հետազոտական թևը, մտավոր կենտրոն է, որը ձգտում է ներմուծել զարգացման նոր հայեցակարգեր բարձրակարգ միջազգային կապերի, լավագույն որակավորում ունեցող վերլուծաբանների և խորհրդատուների ցանցի միջոցով: Կենտրոնի մասնագիտացումը մրցունակության համակողմանի ուսումնասիրությունն է մակրո և միկրո մակարդակներում, կենտրոնանալով հետևյալ հիմնական ուղղությունների վրա՝ ազգային տնտեսական և ճյուղային ռազմավարություններ, օտարերկրյա ներդրումներ, սփյուռքի ցանցեր և արժեքները գործարար և հանրային ոլորտներում:

«Ի-Վի Քոնսալթինգ»-ը գործարար խորհրդատվական, հետազոտական և ֆինանսական միջնորդի ծառայություններ է մատուցում նորարարության և մրցունակության ձգտող կազմակերպություններին:

Երևան 0051, Հովսեփ Էմին 123
 Հեռ.՝ +37410 219740
 Էլ-փոստ՝ info@ev.am
www.ev.am